# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, 093030002,094612206,
azatavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 34-Ա

## ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14րդ հոդվածի 6րդ կետով համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ազատավան համամայնքի ավագանու թիվ10 նիստի հետևյալ օրակարգը

1.2020թ. համար Ազատավան համայնքի վարչական տարածքում տեղական տուր-քերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:

2.Ազատավան համայնքի ղեկավարի աշխատավարձի չափի և համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

3.Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից վարձակալությամբ տրամադրելու մասին:

4. Համայնքային սեփականության հողամասը ուղղակի վաճառքով օտարելու թույլտվության մասին:

5.Համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքն աճուրդային եղանակով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

6. 2019թ բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

7. Ազատավան համայնքի 2020թ բյուջեի քննարկման և հաստատման մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՏՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՏԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, 093030002,094612206,
azatavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 35-Ն

## ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությանօրենքի 18-րդհոդվածի 18-րդ կետի ինչպես նաև <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

2020թ. համար Ազատավան համայնքի վարչական տարածքում սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը․

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

Հիմնական օբյեկտների համար

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200

քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500դրամ.

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա)200-իցմինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -15000դրամ,

բ) 500-ից մինչև 1000 քառակուս մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ,

գ)1000-ից մինչև 3000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝25000դրամ,

դ)3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 1000 դրամ

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա,

այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 2500դրամ:

Համայնքի վարչական տարածքում.

4. հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 18000 դրամ.

5. խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝ 15000 դրամ.

6. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) Հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար.

մինչև 26 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 900 դրամ,

26-50 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 3300 դրամ,

50-100 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 4200դրամ,

100-200 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 6300 դրամ,

200-500 քմ ընդհանուր մակերեսի դեպքում 7800 դրամ,

500 և ավելի քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 13800դրամ:

2) Հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի պետական տուրք սահմանել.

մինչև 26 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 900 դրամ,

26-50 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 3300 դրամ,

50-100 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 4200 դրամ,

100-200 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 6300 դրամ,

200-500 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 7800 դրամ,

500 և ավելի քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 13800 դրամ:

7. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար 150 դրամ՝1քառ.մ համար

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝

1)առևտրի օբյեկտների համար՝ 7500 դրամ.
2)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 15000րամ.
3)բաղնիքների (սաունաների) համար՝ 60000դրամ.
4)խաղատների կազմակերպման համար՝ 75000դրամ.
5)շահումով խաղերի կազմակերպման համար՝ 30000դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 30 000 դրամ:

9. Համայնքի տարածքում հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի տեղական տուրքը սահմանվում է.

մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ,

26-50 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 2100 դրամ,

50-100 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 3300 դրամ,

100-200 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 4800 դրամ,

200-500 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 6300 դրամ,

500 և ավելի քմ ընդհանուր մակերեսի համար՝ 9300 դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի տեղական տուրքը սահմանվում է.

մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300 դրամ,

26-50 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 600 դրամ,

50-100 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 900 դրամ,

100-200 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 2700դրամ,

200-500 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 3000 դրամ,

500 և ավելի քմ ընդհանուր մակերեսի համար՝ 4800դրամ:

10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել՝
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ -1050դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ -450 դրամ.
4) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների 1 քմ-ի համար՝ 113 դրամ:

5)Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը ապա համապատասխան բյուջե պետք է վճարի 45 դրամ՝ այդ գովազդիմակերեսին համապատասխան :

6)Հայաստանի Հանրապետության Ազատավան համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝30000դրամ:

7) Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 3000դրամ՝ յուրաքանչյուր մեքենայի համար:

Տեղական վճարներ

1.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ
մշակելու,հաստատելու, «շինարարության ավարտական ակտի ձևակերպման համա ր, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար տեղական վճ ակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճ ար սահմանել՝ 10000 դրամ

2. տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝5000դրամ

3. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել՝ 1000 դրամ:

4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական վճար ՛ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000 դրամ:

5. տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար սահմանել՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100դրամ:

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա/ ըստ ծավալի՝ մեկ խորհանարդ մետր աղբի համար -----1000 դրամ կամ

բ/ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար --- 5000 դրամ

3) Համայնքի առևտրի ,հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների օբյեկտների յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ամսեկան 25 դրամ:

4) Արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների 1քմ-ի համար ամսեկան 5դրամ:

5) Կրթական,մշակութային առողջապահական սպորտային շինությունների 1քմ-ի համար ամսեկան 2դրամ»:

6.Գյուղատնտեսական աշխատանքների համար / հողը վարելու , փխրեցնելու / տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դեփքում 1հա 30 000ՀՀ դրամ:

7.Սահմանել համայնքի տարածքում անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների առաջարկվող ցանկը և գնացուցակը:

ա/կենդանիների բուժման կանխարգելման հարցերով խորհրդատվ -500 դրամ

բ/ Ծննդօգնություն

թեթև միջամտություն -1000 դրամ

ծանր միջամտություն -5000 դրամ

գ/վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների - 100 դրամ/մանր կենդ./

իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում -200 դրամ /խոշոր կենդ/

կամ այլ նմուշառում կախված կենդանու տեսակից

/բացառությամբ <<գյուղատնտեսական կենդանիների պատվաստում >>

պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային

միջոցառումների

դ/ Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար -200 դրամ

ե/ Ախտահանություն -1 քմ 200 դրամ

զ/Միջատազերծում /դեզինսեկցիա/ -1 քմ 100 դրամ

է/Կրծողների ոչնչացում/ դեռատիզացիա/ -1 քմ 200 դրամ

զ/Արհեստական բեղմնավորում -5000 դրամ

է/ Կենդանու հերձում -1000 դրամ/ մանր կենդ./

3000դրամ/խոշոր կենդ./

ը/ Կենդանու բուժում /յուր. այցելություն/ - 1000 դրամ

թ/ Կենդանիների նախասպանդային զննում -1000 դրամ/ մանր կենդ./

2000դրամ/խոշոր կենդ./

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՏՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ <u>ՊԵՏԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ</u>

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, 093030002,094612206,
azatavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 36-Ն

### ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 2020Թ. ՀԱՄԱՐ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստան Հանրա պետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի, , Հայաստանի Հանրապետության << Աշխատանքային օրենսգրքի >> 113րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է**

Հաստատել 2020թ. համար Ազատավան համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը , համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՏՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՏԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

04200968

Հավելված

Ազատավան համայնքի ավագանու

23.12.2019թ.   N 35- Ն որոշման

ԱԶԱՏԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈւՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈւՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 15 /2020թ/

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | 2019Թ. ՊԱՇՏՈ-ՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ / ՀՀ դրամ / |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 280000 |
| Հայեցողական պաշտոններ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 170000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| Համայնքպետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 180000 |
| Համայնքպետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 178000 |
| Համայնքպետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2,3-2/ | 1 | 178000 |
| Համայնքպետարանիաշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 130000 |
| Քաղաքացիական աշխատանք | | |
| Սպորտ կազմակերպիչ | 1 | 90000 |
| գեղմասվար | 1 | 93000 |
| Գրադարանավար | 1 | 90000 |
| | | |
| | | |
| | | |

| | | |
|---|---|---|
| | Տեխսպասարկման անձնակազմ | |
| անասնաբուժ | 1 | 90 000 |
| Պահակ | 1 | 90000 |
| կատարածու | 1 | 90000 |
| Հարկահավաք | 1 | 100 000 |
| Հավաքարար | 1 | 90 000 |
| Տրակտորի վարորդ | 1 | 110000 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, 093030002,094612206,
azatavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 37-Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդհոդվածի 21) կետի պահանջներով և ՀայաստանիՀանրապետության <<Հողային օրենսգրքի>> 76-րդհոդվածիպահանջներով՝ *ավագանին ՈՐՈՇԵՑ* .

1.Թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշա նակության 3-րդ կարգի 03-007-0188-0004 ծածկագրով 0.537հա վարելահող տրամադրել վարձակալությամբ ՝ մրցութային կարգով:

2.Վարձակալությամբ տրվող հողամասերի վճարի մեկնարկային չափը սահմանել՝ հողի հարկի տարեկան դրույքաչափը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՏՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՊԵՏԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, 093030002,094612206,
azatavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 38-Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ,, Հողային օրեսգրքի,, 66 հոդվածի Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թթիվ 286 Ն որոշման դրույքներով համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ թույլտվություն համայնքի ղեկավարին Ազատավան համայնքի սեփականություն հանդիսացող 03-007-0142-0019 ծածկագրի տակ հաշվառված 0,12017հա նպատակային նշանակությունը բնակավայրերի ,գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի
վաճառման եղանակով վաճառել քաղաքացի Սոսիկ Վարդանյանին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՏՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՊԵՏԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, 093030002,094612206, azatavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 39-Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով ՝ համայնքի ավագանին որոշում է

Թույլատրել համայնքի ղեկավարին աճուրդային կարգով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը՝ ծածկագիր 03-007-0204-0006, մակերեսը՝ 0,1664հա նպատակային նշանակությունը ՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը ՝վարելահող , որպես մեկնարկային գին սահմանելով կադաստրային արժեքի 100% չափով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՏՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՏԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, 093030002,094612206,
azatavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 40-Ն

2019Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով ՝ համայնքի ավագանին որոշում է.

Ազատավան համայնքի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

Ֆոնդային բյուջեում 38-01-00գործառնական դասակարգման եկամտային մասը ավելացնել 15573,542հազ դրամ,09-01-01-51գործառնական դասակարգման նոր 900412002355հաշվինավելացնել 15573,542 հազ. դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՏՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՊԵՏԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ
# ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, 093030002,094612206,
azatavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 41-Ն

### ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ-Ի ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Յայաստանի հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 18-րդ հոդվածի 5-րդ կետով ` համայնքի ավագանին որոշում Է հաստատել Ազատավան համայնքի 2020թ-ի վարչական բյուջեն հետևյալ ձևով.

Վարչական բյուջեի եկամտային մաս 78601.9հազ.դրամ

1.Յամայնքի բյուջե մուտքագրվող գույքահարկ `11000,0հազ.դրամ

ա. Գույքահարկ անհատ ձեռնարկատերերից և քաղաքացիներից փոխադրամիջոցների համար` 10500,0հազ.դրամ

բ. Գույքահարկ շենք շինությունների համար` 500,0հազ.դրամ

գ. Յողի հարկ` 6200,0հազ.դրամ

որից` ֆիզիկական անձ` 6161,5հազ.դրամ

իրավաբանական անձ` 38,5հազ.դրամ

Տեղական տուրքեր` 215,8հազ.դրամ

ա. շինթույլտվություն` 7,5հազ.դրամ

բ. շենք շինություն վերակառուցում` 3,0հազ.դրամ

գ. շին. քանդման թույլտվություն` 2,5հազ.դրամ

դ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվ.՝ 92,4հազ.դրամ

ե. ոգելից խմիչքի վաճառքի թույլտվ.՝ 92,4հազ.դրամ

Տեղական վճարներ

ա.աղբահանության վճար՝ 3100,0հազ.դրամ

բ.այլ վճարներ՝ գյուղտեխնիկայի մատուցած ծառայությունների դիմաց՝ 3300,0հազ.դրամ

Այլ եկամուտներ

ա.Հողի վարձակալություն՝650,0 հազ.դրամ

բ. Հենասյուների վարձակալություն՝ 63,0հազ.դրամ

Վարչական բյուջեի ծախսային մաս ՝ 78601,9հազ.դրամ

1.Կառավարման մարմնի պահ.՝ 32513.2հազ.դրամ

2. Ընդհանուր բնույթի այլ ծառ.՝ 3800,0հազ.դրամ

3. ընդհանուր բնույթի հանրային ծառ.՝ 341,0հազ.դրամ

4.Մայրուղիների և փողոցների վերակառ.և հիմնանորոգում՝ 980,0հազ.դրամ

5.Աղբահանություն և սանմաքրում՝ 3100,0հազ.դրամ

6. Կենսաբազմազանություն և բն. պահպանություն՝ 120,0հազ.դրամ

7.Արտաքին լուս.ցանցի շահագործում պահպ.՝ 3460,0հազ.դրամ

8.Սպորտ. միջոցառումների իրականացում՝ 1400,0հազ.դրամ

9. մշակութային միջոցառումների իրականացում՝ 4650,5հազ.դրամ

10.Թատերական ներկայացումներ՝ 350,0հազ.դրամ

11. հանգիստ, մշակույթ և կրոն՝ 300, 0հազ.դրամ

12.Նախադպրոցական ուսուցում՝ 900,0հազ.դրամ

13. Հանրակրթական ուսուցում՝ 1100,0հազ.դրամ

14.Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում -1233,0հազ.դրամ

15.Սոց. անապահով անձանց աջակցություն՝ 9100,0հազ.դրամ

17. Հասարակական կազմակերպ. աջակցություն՝ 500,0հազ.դրամ

18. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ՝ 14754,2հազ.դրամ

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՏՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՏԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ԱԶԱՏԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 04200968